

վերջ Ֆրանչիսկեանք տիրանալով նոյն տեղւոյն շինած են Ս. Կուսի անուամբ մատուռ մը: Ան կը շարունակէ գրելով թէ հաւանական է որ այս վանքը կապակցութիւն մը ունենար այն Ս. Աստուածածնի եկեղեցիին ու վանքին՝ որուն տաներկու վանականները կը յիշուին ԷՕՏին գրի առնուած «Commemoratorium de Casis Dei» խորագրով լատին յիշատակարանին մէջ (Tobler, Descriptiones Terrae Sanctae, էջ 81): Նոյն տեղը աւելի որոշ կը յիշուի ԺԲ. դարուն Յովհաննէս Վերդպուրկիէն որ Գաւալիմուսն շնոր ցոյց կու տայ մէկ մղոն նազարէթէն գէպի հարաւ: Ganneau-ի այս բացատրութիւններէն Ս. Զաքարիա վանքին թուականն ալ կրնայ ճշգրտած նկատուիլ. որով ըսել է թէ ան արդէն Թ. դարու սկիզբէն գոյութիւն ունէր: Նոյն լեւոն գագաթը և ճանապարհին վրայ ուրիշներ ալ, ինչպէս լատինք, յոյնք և հայէշք, վանքեր ունէին և ունին այսօր ալ: Ի հնումն հոն կար նաև վանք մը Տէյր կը Պիմաք ըսուած, որ կը նշանակէ կոսանոց: Հայ բարեպաշտութիւնը անտարակոյս ետ չպիտի մնար իր սեպհական վանքը ունենալէ նոյն լեւոն վրայ:

Բայց կը տարուինք հարցնել թէ գահափոխման լեւոն աւետարանական պատմութեան նշանակութիւնը յայտնի ըլլալով ինչ պատճառներէ մղեալ Հայք իրենց հիմնարկած վանքը անուանակոչեր են Ս. Զաքարիայի վանք: Այս հարցման պատասխանը կու տայ մեզ Ernoul լատին քրոնիկագիրը (ԺԲ. դար) որ իր Ժամանակագրութեան մէջ կը գրէ թէ տեղւոյն քրիստոնէից մէջ աւանդութիւն կայ որ Ս. Կոյսը Զաքարիայի տան մէջ նոյն կողմերը այցելած է եղիսարեթի: Ուրեմն այդ տեղական աւանդութեան վրայ յենելով է որ Հայք Ս. Զաքարիայի վանքը կառուցած են նազարէթի մօտը՝ յարձանակ շինելու: Անտարակոյս այս տեղական աւանդութիւն մ'է որը կը տարբերի Աւետարանի պատմութիւնէն (Ղուկ. Բ. 39) և որուն համաձայն կը հասկըցուի թէ՛ Ս. Կոյսը եղիսարեթը ողջունելու համար նազարէթէն կը մեկնի «շնոնակոյն ի քաղաքն Յուդայ»։ Իգնատիոս՝ Ղուկասու մեկնիչը և շատերը քաղաքն Յուդայ ըսելով կը հասկնան Երուսաղէմի մօտիկ Այնքեարիմ ըսուած տեղը, ուր նա-

նապէս Հայեր կառուցած են փառաւոր վանք ու եկեղեցի (տե՛ս այս մասին մեր յօդուածը, Սիւն. 1927, էջ 207-211, 263-267): Փառք մեր նախնիքներուն՝ որ բարեպաշտօրէն կը յարգէին աւետարանական բոլոր աւանդութիւնները և կը յայտնէին իրենց սէրը և կը կոթողէին իրենց հաստքը տիրանուէր յիշատակարաններով:

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱՆՈՒՆԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Հին ՀԱՅԵՐԷՆ ԶԵՌԱԳԻՒ ԳՐՈՒԱԾ 1683-ԻՆ

Զեռագիրս մաս կը կազմէ անձնական հաւաքածոյիս: Մեծութիւն՝ $3\frac{5}{8} \times 4\frac{3}{8}$: Նիւթ՝ թուզթ: Թերթեր՝ 142: Գիր՝ բոլորգիր: Տողք՝ 18, միասին: Կազմ՝ սև կաշեպատ տախտակ: Հանգամանք՝ իւղտած և վերջին թերթին ստորին կէսը պատռած: Պահպանակ՝ չկայ: Նկար՝ մէկ հատ մագաղաթի վրայ: Լուսանցազարդք, խորանք՝ պարզ և կարմրաւ միայն: Գլխազիրք՝ հասարակ կարմրաւ: Զեռագիրս մաս կազմեց հաւաքածոյիս 1929-ին:

Պարունակութիւն. —

Ներքին Ա. կողք, էջ 1ա: — «Գիրք Պատմութեան Երուսաղէմայ Աստուածաշուրջ և քրիստոսակոխ քաղաքին: Արարեալ Յուսէֆէն(1) բանասիրէ ոպասաւորէ Սրբոյն Երուսաղէմի ի փառս մարմնացելոյ բանին Աստուծոյ:

«Ի թուարեութեան Հայոց ՌՃԼԲ.ին և Սեպտեմբերին:»

Էջ 1բ գրէն. — «Բան առ ընթերցողս».

«Ծառատունկ և երփնազարդ բուրաստանս այս փոքրիկ՝ ունի յինքեան պարունակեցեալ գրոլոր տնօրէնութեան տեղեացն Քրիստոսի պատմութեան՝ որ կատարեցաւ ի Սուրբ քաղաքն յերուսաղէմ հանգերձ իւրաքանչիւր տեղեաց գովասանա-

(1) Ըստ իս Զեռագրիս մէջ գրուած երգերուն ճշդինակ՝ Սարգիս վարդապետը ինքն է Ս. Յակոբայ միաբան: Սակայն իր մասին յաւելուածական ուրիշ ծանօթութիւններ կը պակսին ինծի:

կան երգարանութեամբ և աղօթիւքն, որ պարտի գլխաւոր տեղիսն աղօթել: Ուրեմն որք ունիք զՅերմեոանդութիւն առ սուրբ քաղաքն Երուսաղէմ, և առ տնօրինական տեղիքն Քրիստոսի, ընկալարուք զայս փոքրիկ տետրս, և ընթերցարուք սա ի ընդ զփափաք սրտից հարցն զի ոչ սակաւ մխիթարութիւն գտանի ի սա անձանձիր ընթերցողաց. ողջ լերուք ի տէր»:

Յաջորդ թերթը մագաղաթ է, որուն Բ. էջին վրայ տպուած է զրքոյկիս միակ նկարը: Ստորեւ՝ «մանկացեալ Աստուած ննջէ ի մէջ շարժարանաց», որ նկարիս պարունակութիւնն ալ կը պարունակէ: Նկարին լատիներէն անունն ալ կայ HÆC REOVIPS MEA: Իսկ աջ անկիւնին վրայ կայ գծողին ստորագրութիւնը: Cor. V. Merlan: Նկարը գունաւոր է: Ըստ իս հատորին հետ կամ համար որեւէ սկզբնական աննշութիւն չունի. և միայն վերջը անոր կցուած է, զրոգէն՝ կամ կազմողէն:

Ձեռագիրս կուտայ ծանօթութիւններ Սուրբ Տեղեաց վրայօք զորս հոս ամբողջութեամբ կ'արտագրեմ ի բաց թողլով այն մասերը որոնք Սուրբ Տեղեաց հին սրբադան պատմութեամբ կը զրադին. առտոնք ամէնուն ալ ծանօթ են: Լուսանցքին տակ կ'աւելցուեն իմ ծանօթութիւններս:

Ձեռագիրս գրուած է ըստ երեոյթի իրր ձեռաց ուղեցոյց: Շահեկան է որովհետեւ մինչև հիմակ անձանօթ աղբիւր մըն է, որ ունի օգտակար ծանօթութիւններ ժէ դարու Երուսաղէմի հայ սրբատեղեաց վրայօք, ինչպէս նաև օտարաց պատկանող սրբատեղեաց մասին:

«Ճանապարհիք սրբոյ Բաղաթիմ Երուսաղէմայ»

Էջ 3ա.—Արդ ճանապարհ Սրբոյ քաղաքին Երուսաղէմայ որք ընթանան տէրունական ուխտաւորքն են երկու. մինն ծովով, և մինն ցամաքով. ծովային ճանապարհի սկիզբն որ մտանէ ի սահմանս Հրէաստանի, ուր է Սուրբ Քաղաքն Երուսաղէմ է նաւահանդիստն Յոպպէ, որ յայլասեոյց ասի Եաֆայ. Զի նա է նաւահանդիստ սրբոյ վայրին, որ թէպէտ ի յամէն կողմանց մտանեն ուխտաւորքն ի նաւ, և զիմեն սուրբ տեղեացն Քրիստոսի երկընդազութիւն, սակայն հարկաւորաբար պար-

տին ամէնքն ի Յոպպէ ելանել, և ապա ի Յոպպէէ ժի ժամու ցամաք ճանապարհաւ հասանիլ ի սուրբն Երուսաղէմ:

«Իսկ ցամաքային ճանապարհի սկիզբն, որ մտանէ ի սահմանս Հրէաստանի, է Դամասկոս քաղաքն, որ յայլասեոյց ասի Շամ: Զի ցամաքով գնացող տէրունական ուխտաւորքն պարտին ամէնքն անդ հաւաքիլ. և անտի առնել ի քաղաքապետէն բազում հեծելս՝ վասն ահի ճանապարհին և այնպէս բազմութեամբ է կամ Ը աւուր ճանապարհաւ հասանել ի սուրբ քաղաքն ցանկալի» (էջ 4ա վերէն 5 տող):

Էջ 4ա ի կէսէն.— «Վասն Յոպպեու նաւահանգսիս» (մինչև 6ր, 8 տող կը խօսի Յոպպէի հին կրօնական պատմութեան վրայ որմէ վերջ կը շարունակէ) —

«Արդ՝ յայսմ նաւահանգստիս քաղաքն շինեալ է ի վերայ գեղեցիկ բլրի միոյ. Բ կողմն ծովային և Բ կողմն ցամաքային, և ունի ի մէջ իւրն հաստատուն բերդ մի զինուք եւ զինուորօք ամրափակեալ. նաեւ գոյ Գ ազգաց քրիստոնէից որիչ որիչ վանք. այսինքն Հայոց, Յունաց եւ Ֆռանկաց որ իւրաքանչիւր ազգի ուխտաւորքն յիւրեանց վանսն օթեանին մինչև ելանելն Երուսաղէմ: Բայց վանքն Հայոց է յոյժ գեղեցիկ, եւ վայելուչ որ շինեալ է յեղիազար կաթողիկոսէ⁽¹⁾, զի ունի բազում ծովահայեաց դարպասս և օտայս, կամարաշէն սըրահս, և քաղցր ջրհորս և այլ բազում մըխիթարական բնակարանս, որք եկեալ ուխտաւորքն անդ մնալով մէկ քանի աւուրս առնեն ուրախութիւնս բազումս: Ունի ես եկեղեցի մի Գ խորանաւ զարդարեալ, որոյ աւագ խորանն է կառուցեալ յանուն Սրբոյն Նիկողայոսի հայրապետին, յաջակողման խորանն յանուն Սրբոյն Յակոբոյ, և ձախակողման խորանն յանուն Սրբոյն Պետրոսի Առաքելոյն» (էջ 7բ 4 տող):

«Վասն Ընկիւնու»

«Արդ ի Եաֆայու Գ ժամու ճանապարհ զիւղաքաղաք մի կայ դէպի Երուսաղէմ, որ ուխտաւորքն ելեալ ի Յոպպէէ անդ իջնանին, որ ասի յայլասեոյց Ընկիւն. իսկ

(1) Տ. եղիազար Պարթ.-Կթղ. 1666-1668 եւ դարձեալ 1670-1677:

ի գիրք սուրբ յիշատակի Պաղեստինէ: Եւ թէպէտ յառաջին ժամանակին բազմամարդ և ընդարձակ եղեալ է, բայց այժմ երեւի յոյժ նուազեալ և քայքայեալ: Անդանօր զոյ վանք մի հայոց ազգին, շինեալ յեղիւսդար Կաթողիկոսէ, ուր բնակին միաբանք և կարգաւորք, նաեւ տէրունական ուխտաւորքն անդ օթեւանին: Եւ է յոյժ գեղեցիկ կերտեալ ի սրբատաշ քարանց, բարձրաբերձ խցերօք, և դարպասիւք դարդարեալ, և ունի բազում իլիմօնի ծառերս և բարեհամ ջրհորս, և այլ ազգի ազգի վայելչութիւնս. նաեւ զոյ անդ յեկեղեցի յանուն սրբոյն Գէորգեայ քաջայաղթ վկային կառուցեալ կամարաշէն և շքեղադարդ: Եւ անտի մինչ յերուսողէմ Ը ժամու ճանապարհ է: Բայց ի ծախակողմն գէպի հիւսիս իբր Ա ժամու ճանապարհ զոյ զիւզ մի, որ ասի յայլուսեռից Լիւզ, իսկ ի մերս Լիւզդա. անդ զոյ եկեղեցի մի մեծաշէն բայց այժմ աւերեալ յանուն Սրբոյն Գէորգեայ, ի ձեռն յունաց ազգին: Ի բազմաց ասի և հաստատի թէ Սուրբն Գէորգէոս անդ մարտիրոսացաւ յորոյ պատիւ շինեցաւ եկեղեցին ի կոստանդիւնոս կոյսերէ: Իսկ այժմ ոչ ոք ուխտաւորաց հանդիպի անդ վասն բացակայութեան ճանապարհին: Նաեւ ասի թէ՝ Պետրոս Առաքեալն անդ բժշկեաց զանդամալոյձն Ենա. որպէս գրեալ է ի գործս առաքելոց:» (էջ 8բ.) (էջ 9ա).—

«Վասն Զեմելի անուանեալ գիւղին»

«Յերուսաղիմայ Գ ժամ մնացեալ կայ զիւզ մի ևս, որ անուանի Զէմէլի: Եւ յաւանդութիւնէ ասէ թէ սոյ է Անաթոլթ քաղաքն Եսայիայ մարդարէին: Անդ զոյ աւերակ եկեղեցի մի որ պատմի ի հնազոյն արանց թէ, տէրունական ուխտաւորքն որք ի սուրբ քաղաքն գնալոց էին, նախապէս անդ արգիլեալ լինէին՝ մինչև խոստովանեցին և մաքրեցին յամենայն յախտից չարեաց. և ապա ելեալ անտի մաքրեալք և սրբեալք գնային ի Ս. Երուսաղէմ, որ այժմ վասն աւերակութեան տեղոյն, և մանավանդ վասն չարութեան արապներաց արգիլեալ է զայս սովորութիւնս, միայն թէ ընդ մէջն անցանելով զնան, և ոչ դարին և ոչ ժամ մի:»

«Այս է որք գտանին ի ծովային ճա-

նապարհի, ի յոպպէ մինչև յերուսաղէմ քաղաքն: Ուրեմն տեսցուք և վասն ցամաքային ճանապարհին թէ զինչ գտանին ի Դամասկոսէ մինչև յերուսաղէմ:» (էջ 9բ. տող 10):

«Վասն Մայրաւաղախի Դամասկոսի»

«Արդ՝ մայրաքաղաքն Դամասկոս, որ ասի յայլազգեաց Շամ, է յոյժ բարեկի և ջրաւէտ, մինչ զի ասի թէ է գետ անցանին ընդ քաղաքի միջով: Ունի անթիւ պարտէզս, վասն ջրաւէտութեան տեղոյն. և մեծամեծ գեղեցիկ շինուածս, և կայ վայելուչ վանք մի Հայոց ազգի, որ կոչի Սուրբ Սարգիս, ուր յօթեանին ի ցամաքէ եկեալ ուխտաւորքն, և է բազում խցերօք, և սրահիւք զարդարեալ ի պարծանս ազգիս Հայոց. և եղև վերանորոգեցեալ ի Պարոնտէր կոչեցեալ Գրիգոր Հայրապետէ⁽¹⁾ սրբոյ և մեծի աթոռոյս Սրբոց Յակոբեանց: Ի Դամասկոսէ մինչև յերուսաղէմ Ը աւուր ճանապարհ է:» (էջ 10ա, տող 14):

«Վասն սրբոյն Նազարէի ուր յղացաւ սուրբ Ասուածածին զԲանն Ասուծոյ»

«Ի Դամասկոսէ Ե աւուր ճանապարհ է մինչև ի սուրբն Նազարէթ.» (մինչև էջ 13ա, տող 8 կը խօսուի Երեման կրօնական սրբազան պատմութեան մասին՝ հոսակ աւելցունելով) — «վասն որոյ զշխոյն Հեղինէ Բ վանք շինեաց. մինն Յովսէփայ տանն, որ այժմ ի ձեռին ֆռանկաց ազգին է, և միւսն ի վերայ այնմ աղբեր, որ այժմ ի ձեռն յունաց ազգին է:» (Ասոր կը յաջորդէ «Երդ Ասացեալ ի Սարգիս վարդապետէ առ Սուրբն Նազարէթ». 6 տուն յետոյ՝ «Աղօթք ի Սուրբն Նազարէթ» մինչև էջ 14բ վերջը) (էջ 15ա):

«Վասն արեւան լեռին» (Սրբազան պատմութիւնը՝ մինչև էջ 16ա վերջը) (Տ էջ 16բ).—

«Վասն Թափօրի սրբոյ լեռին»

«Լեռն թափօր, ուր պայծառակերպեցաւ տեարն մեր Յիսուս Քրիստոս է նազարէթու սակաւ ինչ հեռի, և Նային քաղաքին հանդէպ, ուր յարոյց Քրիստոս զմիաժօր որդի այրի կնոջն: Եւ է բարձրադիտակ, բոլոր և ծողկաւէտ, և յառաջին

(1) Տ. Գրիգոր Դանձակեցի Պատրիարք 1613-1643):

ժամանակին հղեալ է անդ բազում վանդաւորացի, եւ հեկեղեցիս. բայց այժմ ոչ ինչ երեւի նըշան չի նութեան, եւ այն վասն մեղաց մեղաց:» (ասկէ վերջ կուգայ լեւան Սրբազան պատմութիւնը եւ կ'աւարտի էջ 20ա, տող 8՝ սա տողերով) — «վասն որոյ բազումք ի յուխտուորաց զնան անդ, առ ի յուխտ եւ յերկրպագութիւն սուրբ տեղեացն քրիստոսի աստուծոյ մեղաց:» (կը յաջորդէ «երգ առ սուրբ լեւան Թափօր»: յետոյ՝ «Աղօթք առ սուրբ լեւան Թափօր»:» (էջ 22ա)

«Վասն Երանելի լերինն»

«Մերձ Թափօրական լերինն զոյ տափարակ տեղի մի, ուր Քրիստոս ժողովեաց զաշակերտան իւր, եւ ետ բազում խրատս: Եւ անտի երեւի բլուր մի որ կոչի Երանելի լեւան, զի ասի թէ Քրիստոս զինն երանութիւն՝ զոր զրէ Աւետարանին Մատթէոս, ի վերայ այնմ բլրի նստեալ քարոզեաց:» (Սրբազան պատմութիւնը՝ մինչեւ էջ 23ա ուրիշ կը շարունակուի) — «Եւ ի յայնմ դաշտին զոյ ցամաք հոր մի որ կոչի Յովսէփայ Հոր, զի անդ արկին զՅովսէփ Գեղեցիկն եղբարքն իւր, եւ յետոյ անտի հանեալ վաճառեցին Իսմայելացեաց որ զընային յեղիպոսս՝ զիւրապին արծաթով, որպէս Յուդա վաճառեաց զՔրիստոս ընդ երեսուն արծաթոյ ի Հրէից:» (Ասոր կը յաջորդէ «Վասն ծովուն Տիբերականի». Սրբազան պատմութիւնը՝ մինչեւ էջ 28բ, ուր կը սկսի «Երգ առ ծովն Տիբերական». յետոյ՝ «Աղօթք առ ծովն Տիբերական», մինչեւ էջ 30ա վերջը:» (էջ 30բ)

«Վասն Կափառնայում Բաղաբին»

(Կուտայ Սրբազան պատմութիւնը, տւելցնելով) — «Մանաւանդ զիւր սրբոյն Յովհաննու Կարապետին անդ Թաղեցու, թէպէտ այժմ ոչ է անդ, վասն որոյ ուխտաւորք ոչ հոգս տանին անդ գնալու, եւ ուխտս անելոյ:» (էջ 31ա)

«Վասն Սամարիայ Բաղաբին»

«Ի միջակէան Երուսաղիմայ եւ Նաղաթեթու ճանապարհի է Սամարիա քաղաքն, որ յայլասեոյց ասի Նապուս: Զի Քրիստոս ի յայնմ քաղաքի եւ բազում հրաշս եցոյց: Վասն որոյ բազումք հաւատացին անդ ի Քրիստոս: Որպէս պատմէ Աւետարանին Յովհաննէս: Եւ ի յայնմ քաղաքէն

յառաջ ընթացեալ գէպ ի յերուսաղէմ իրր Բ ժամու ճանապարհ գտանի զիւր մի, որ անունն կոչի Սիւքար ի յԱւետարանի: Անդ զոյ ջրհոր մի, յորում Քրիստոս վաստակեալ ի ճանապարհի նստեալ ջուր խնդրեաց ի կընծջէն սամարացոյ, որպէս պատմէ տւետարանին մանրամասնաբար: Եւ անտի յառաջ եւ գտանի զիւր մի, որ կոչի Սեբաստիա, որոյ վասն ասի թէ անդ հղու սուրբն Յոհաննէս ի բանա ի Հերովդէէ չար թաղուորէն. եւ վերջապէս անդ զլիսատեցու ի վերայ տատուածային օրինացն, եւ թաղեցու յաշակերտաց իւրոց: Արդ՝ ի Սամարիոյ մինչեւ յերուսաղէմ ԹԲ ժամու ճանապարհ է: Բայց ի Դ ժամու ճանապարհին զոյ զիւր մի որ կոչի յայլադեաց Դաւթըն, ուր զլիսատեցու սուրբն Յակոբոս որդին Զեբեթեայ եւ եղբայրն Յովհաննու տւետարանին, որոյ սուրբ եւ պատուական Դուխն անտի բարձրեալ հղե ձեռամբ հրեշտակէ եւ բերեալ ի սուրբ յԱթոս, որ մայրըն Աստուծոյ Կոյսն Մարիամ, եւ եղբայր տեառն սուրբն Յակոբոս, եւ Աւետարանին Յոհաննէս ամբողջեցին ի մէջ գերազարդ Աթոսոյ, որ ի յերուսաղէմ քաղաքն է պարծանք ազգին հայոց: Այս է ի մէջ Շամու ճանապարհի հղեալ զլիսաոր Եւստատեղիքն, որ համաօտաբար եւ կարճ ի կարճոյ պատմեցաք վասն չճանձրացուցանելոյ զընթերցողքդ, եւ զլսողքդ:

«Վասն որոյ այսուհետեւ հարկ է պատմել զտեղեացն այնոցիկ որք գտանին ի մէջ սրբոյ քաղաքին յերուսաղիմայ, եւ կամ շուրջ զնովաւ: Բայց յառաջ քան զպատմութիւն առնելն, իրր հանդէպ կացեալ քաղաքին սրբոյ՝ ներբողեցուք ըստ կարողութեան տկարիմաց մտաց մեղաց զսուրբ քաղաքն ցանկալի զսուրբն յերուսաղէմ, զփափաքելին ամենայն ազանց քրիստոնէից:» (էջ 33ա, կը սկսի «Երգ առ սուրբն քաղաքի Երուսաղէմ», մինչեւ էջ 34բ տող 12):

Յ. ՔԻՐԻՍՏԵԱՆ

Վ Բ Ի Պ Ա Կ

Ներկայ թիւի երես 71, ք. սխանակ վերէն տող 25, Քրիստոս, մահը, կարգով «Քրիստոսի մահը»: